

պէտք է լինի թէ արգէն ուրիշ անգամներում յաճախ լուծուածներէ լոկ հրկնութիւն չէ և ոչ էլ շատ անգամ մեքենայապէս գործածի լոկ շարունակութիւն է:

Ամենայն գրաւոր շարագրութիւն այնպէս նախապարտաւորած պէտք է լինի ուսուցման ամբողջ անցեալ ընթացքով որ նոյն իսկ միջակ աշակերտը ամենեկն չգիտարանայ ձևացնել այն — անձամբ իւր ոյժերով. այսպէս միայն կարելի է առաջն առնել այն անպատեհութեան դէմ որով աշակերտը գրգվում է իրանից աւելի յառաջադէմն գրածը արտադրել և որպէս սեպհահան աշխատութիւն ներկայացնել: Գոտարանում վարժապետի առաջ շարագրութիւն գրելը՝ արգէն ինքնին խիստ գրգռում է առաջացնում անմտաբար, որ մեծ վնաս է բերում. ապա ուրեմն ուսուցիչը անդուշաբար չպէտք է աւելի ևս բանը ծանրացնէ իւր խտութիւններով: Ինչպէս որ շատ անգամ պատահում է: Այդ գրգռումը նախ և առաջ այն հանգամանքից է ծագում, որ սխալմամբ սովորութիւն է դարձել գրաւոր աշխատութիւնը բանաւորից աւելի վեր դասել:

Շարագրութեան տեսարանները հարկաւ պէտք է սրբազրուին: Եւ աւելի արդիւնաւոր կը լինի տեսարանները այսպէս վերագարծնել աէրերին. տակաւին տեսարանները չբաժանուած, թող ուսուցիչը յիշողութեամբ կամ յուշատետրի օգնութեամբ այն բոլոր սխալների մասին ճառօրէն խօսէ: որոնց ուղղութիւնը ամբողջ գառարանի համար շահարեւ կարող է դառնալ: և ապա թէ տեսարանները դարձնէ, որպէս զի իւրաքանչիւր աշակերտ իմանայ իւր արած սխալները: Այս գէպքում էլ ուսուցիչը աւելի չպէտք է ծանրացնէ աշակերտների արգէն գրգռուած և լարուած վիճակը իւր դատաստանով: նոյն իսկ բանաւոր գատալճիւրը համեմած է չպէտք լինի տաք տաք խօսքերով: իսկ տեսարակն մէջ մակադրած բառը այն ևս կարմիր թանաքով գրածը՝ պէտք է չափաւոր լինի:

Այս նկարագրութիւնից մենք տեսնում ենք, որ ուսուցիչը նախ և առաջ պիտի կարողանայ հաստատուն կերպով իշխել գասարանում, ապա և հպատակուել գաստաուութեան կանոններին, Իշխել և հպատակուել — սոսնք ներհակութիւն են կազմում. սակայն ծառայելու և իշխելու համար կայ մի կապ, մի հաղորդակցութիւն, մի համաշնչութիւն, մի փոխադարձ թափանցութիւն՝ թէ՛ կենաց աւելի աւագագոյն շրջաններում և թէ՛ համեստ գպրոցական շրջանում:

U. U.



### Հ Ա Յ Կ Ա Կ Ա Կ Ա Ն Ք

ԺԴ

(Եւրոմակուրիս) \*

Հայելի վարուց Փրանկաց կոչուոյ Հարանց վարքից ինձ յաջողուեց մեր Մատենադարանում գտնել ընդ ամենն եօթն օրինակի որոնցից հինգը յիշուած Կարենեանցի Յուցակու մի Այս եօթն օրինակը բաժանուած են կրկու խմբի: Այդ խմբերը նշանակուած ենք A և B տառերով: A-ին են պատկանում հինգ օրինակի որոնք նշանակուած ենք Ա, Բ, Գ, Դ, Ե տառերով: իսկ B խմբին կրկու օրինակի որն և նշանակուած ենք Z և Ը տառերով: Տանք այս Չեռագրիքի համառօտ նկարագրութիւնը: A խումբ.

1-ի: Չմիածնի հիմնական Մատենադարանի № 793 չ է, բոս Կար. Յուցակի № 777/3. նօսր գիր, թուղթ, կաշեկազմ, մեծ. 16×11 Տմ. սկզբնաւորութիւնները կարմրագեղով: Բովանակայելի վարուց էլ 1<sup>ա</sup>—171<sup>ա</sup>. Պակասում է գրութեան վերնագիրը (=Հայելի վարուց, գրութեան սկիզբը «Յսնկ ռոս այրուրեկից. 1<sup>ա</sup>—2բ. Յանկու Ը նշանակուած է ընդ ամենը ՀԱ. գլուխ—Վասն Ազատութեան գլ. Ա. վան Աղօթից գլ. Բ. . . վան Քրիստոսի անուան գլ. ՀԱ. : Հայելու սկզբնաւորութիւնն է. Յաղագս Ազատութեան, գլուխ Ա. 8 էրն մեր Յիսուս Քրիստոս հրամայէ ի փրկական սուրբ աւետարանին, թէ ուր գտնէք ձեր ան և սիրտք ձեր եղիցին. որ իսկապէս այսպէս է. Քանզի ոմն մարդ յոյժ ազա՛հ, արծաթասէր և անյագ. . . : Գրիչը մոռացել է նշանակել ԻՔ. գլխի վերնագիրը (=Յաղագս գարձի մեղաց) էլ. 45ր, ձիշա Հայելու վերջում էլ 171<sup>ա</sup> գտնուում է յիշատակարանը միևնոյն գրչութեամբ, ինչ որ Հայելի վարուցն է. Գրեցաւ ի յուսկառնիս հայոց հազար հարիւր եւ իմն (=1660). Չեռամբ անարժան Գրիգորի Իրուանցոյ. Արդ զփայելօզոզ մաղթեմ որ զինի երթերցման (=ընթերցման) ձերոյ յիշման արժան առնէք զիս և զձեռն իմ: Այստեղ վերջանում է 2-ի մեղ հետաքրքրող մասը. 2-ի երկրորդ մասը, էլ 171<sup>բ</sup>—271<sup>բ</sup>, գտնազան գրչութեամբ անթուական. 2-ի վերջում կրկութեթ մագաղաթեայ պահպանակ, երկրորդ

\* Տե՛ս «Եւրոպոս» 1899 թ. համար է. եր. 299.

մասի բովանդակութիւնն է. «Երազ է ու սուտ  
եղբարք աշխարհի բաներ ի լմանս ո՞ր են  
թագաւորք երկրի պարունայք իշխան ու սուր-  
թան...—Պատմութիւն և խօսք Խիկարայ...  
և շն. (տե՛ս Վար. Յուլիոս):

Բ—№ 794/5—Վար. Յուլ. № 778/1, նօտր. թուղթ,  
կաշեկազմ, սկզբնաւորութիւններ կարմրով,  
սկիզբն ու վերջը մի մի թերթ մագաղ. պահ-  
պանակ. մեծ. 19x14 Տմ.: Բովանդ. Հայեի Վար-  
ուց 2<sup>ա</sup>-114<sup>ա</sup>, առանց վերնագրի: Սկզբի ցան-  
կը պակասուոր: Կէ: գլուխ փոխանակ շն. ի-  
րնագիրն անթերի, թէև վերջին գլուխը նը-  
շանակուած է շ փոխանակ շն այս տարբե-  
րութիւնը ծագում է գրչի սխալից: որովհե-  
տև Կէ գլուխը (էջ 105<sup>թ</sup>) վերջակա նշանա-  
կուած է ԿԳ և այս սխալը շարունակուել է  
մինչև վերջը: Էջմիածնայ և մի քանի վար-  
դապետական կնիքներ (էջ. 4<sup>ա</sup>, 113<sup>թ</sup>, 114<sup>ա</sup>,  
117<sup>թ</sup> և շն), Հայերու վերջում էջ 114<sup>ա</sup> յիշատա-  
կարանը բոլորովին քերուած: էջ 115<sup>ա</sup>-139<sup>ա</sup>  
նախերգանք քարոզի միևնոյն գրչութեամբ:  
Ինչ որ Հայեիին: Էջ 139<sup>ա</sup> Հայոց ՌՃԾԱ թուի  
յիշատակարան, բայց տարրեր և նորագոյն  
գրչութեամբ: Էջ 139<sup>թ</sup> բուն յիշատակարանը  
ստանաւորով որից ահա մեզ հետաքրքրող  
մասը. «Ի ներթուոյ մեր հայկական նախ-  
նեաց կարգեալ է թրվական իւրի քանակ իւր  
եմարտեակ իւր յորինումն և ի ինչ քանակն: Զայս  
պատարեալ թիւ յամարի է գիրագրիւտ վեր-  
ածանող ի: Արգ յանկ ելեալ սա աւարտի ձե-  
ռամը նուստ Մարգար գրչի: [Թուրիս ամոյ  
«երկակ թըրի յետ համարածման օրուքրաթի»]  
«ի խնդրո՞ւ ոմն ճեղագորի Տէր Միխայիլ բանա-  
սիրի»] և շն: Արեմն գրչութեան թուականն  
է 1120 հայկական=1671 փրկչ. (երկ քա-  
ռեակ երկ=2x4+2=10 հարիւրեակ =1000,  
երկ յորեղեան=100, հինգ քառեան 5x4=  
20, գումար 1000+100+20=1120): Էջ 140<sup>ա</sup>  
—250<sup>ա</sup> տարրեր և զանազան գրչութեամբ  
այլ և այլ տեսակ թղթերի վրայ Գրիգորի ե-  
րանների քարոզք... տոմարական աղիսակք  
և շն. և շն:

Գ = 792/1—Վար. Յուլ. 776/2, նօտր. թուղթ,  
կաշեկազմ, սկզբ. կարմրագեղով, մի մի  
թերթ մագաղ. պահպանակ. մեծ. 18x12  
Տմ.: Բովանդ. Հայեի Վարուց էջ 2<sup>ա</sup>—173<sup>թ</sup>.  
սկիզբը այրինական ցանկ լրի շն գլուխ.  
պակասում է գրութեան վերնագիրը: Էջ  
173<sup>թ</sup>—174<sup>ա</sup> յիշատ. «Արգ աղաչեմ... Զը-  
տացող գրոյս զմեզամանձ, անպիտան և զա-  
նարժան ներսուս Հագվինցիս որ և անուամբ  
վարդապետ եւ նյխարպուս յիշման արժան առ-

նէք... եղև աւարտեալ այս գիրք: որ կոչի  
Յրանկաց Հարանց Վար: որ թարգմանեալ եղև  
ի կաթն բարբառոյ հայ բարբառ ձեռամբ Սե-  
փաննու վարդապետի Իովսցոյ: որ է վերակա-  
ցու և զանձապետ ի սուրբ կաթուղիկոսարանն  
Էջմիածնի. բայց զի գրեալ եղև սա ի թուա-  
կանութեանս հայոց Ռ երորդի Ճ երորդի  
ի Ի երորդի և երկրորդ թուի (-ՌՃԻԻ=  
1673), ի թագաւորութեանն Պարսից Շահ  
Սուլեյմանի և յիշխանութեան աշխարհիս Ե-  
րարտեան Սաթի-Ղուլի խանին և ի կաթու-  
ղիկոսութեանն սր. Էջմիածնի Յեանն Յակո-  
բայ սրբազանի Զուղայիցեոյ ի գաւառս Շի-  
րակայ ի հոշակաւոր ուխտս Հաթիճոյ վանից,  
որ այժմ ստի Ղ.փշաղ: Ի վայելուած ներսուս  
վարդապետին Ղալբըցոյ... գրեցաւ ձեռամբ  
Սուլիսու սարկաւաղի Վափանցոյ...»

Էջ 175<sup>ա</sup>—209<sup>թ</sup> զանազան մանր գրու-  
թիւնք, վարք Մարինոսի կուսին, Մարիամու  
կգիպտացոյն, Թէոփոսայ և շն:

Էջ 209<sup>ա</sup> նորագոյն յիշատ. «Շնանկի Հա-  
րանց Վարս ի վայելուած Արզուածցի Սարգիս  
վարդապետին: ըստացու սա յշատակ իւր ան-  
ձին ի թ Հայոց ՌՃԼԸ, ներսուս Սարգիս  
վարդապետների և այլ կնիքներ էջ 3<sup>ա</sup>,  
173<sup>թ</sup> և շն):

Դ—790/1—Վար. Յուլ. 775/1, նօտր. թուղթ,  
կաշեկազմ, սկզբ կարմրագեղով, 2-2 թերթ  
մագաղ. պահպանակ. մեծ 20x14 Տմ.: Բո-  
վանդ. էջ 1—148<sup>թ</sup> Հայեի Վարուց, այսպի-  
սի վերնագրով. «Հայեի Վարուց, յորում  
կան պատմութիւնք հեշտաւորք և բանք օգ-  
տակարար առ ի փրկութիւն մարդկան» (էջ 1<sup>թ</sup>),  
Ծանկ բոտ այբուբենից լրի շն գլուխ: Ծան-  
կում գրիչը սխալմամբ բաց է թողնում Խէ  
գլուխը—Վանն մարդասպանութեան—և կրկին  
անգամ է նշանակում «Վանն նախանուս  
գլուխը, Բնագիրն անթերի, 149 թերթը, Հա-  
յելու վերջում, զատարկ, երեւի նշանա-  
կուած է եղել յիշատակարանի համար: 2-ի  
երկրորդ մասը, էջ 150<sup>ա</sup>—425<sup>թ</sup>, զանազան  
գրչութեամբ: բովանդակութիւնը տե՛ս Վար.  
Յուլիոս, Վերջին թերթի վրայ էջ 425<sup>ա</sup> կայ  
հետեւեալ յիշատակարանը. «Ի վայելուած  
ճահկեցի Աւետիք վարդապետին, և զկնի մա-  
հուան խոյ լիցի ս. Էջմիածնի Մեծի գահին»,  
Միայն այս Յիշատակարանն է ճահկեցու ձեռ-  
քով: Էջ 3<sup>թ</sup> և 425<sup>թ</sup> ճահկեցու կնիքը «Քրիստոսի  
Ծառայ Աւետիք վարդապետ, 1185 (=Հայոց—  
փրկչական 1736), Կերթ թուականը ստաւա-  
րապետ միայն կարող է որոշել 2-ի գրութեան  
ժամանակը: 1185-ը հաւանականարար ճահ-  
կեցու վարդապետ ձեռնագրուելու տարեթիւն

է ցոյց տալիս: Զ-ը կարող էր այդ թուականից շատ առաջ գրուած լինել և յետոյ միայն կերտել ճահկեցու կնքով: Բայց կարող էր պատահել նաև, որ Զ-ը գրուած է այդ (կնքի) թուականից տարիներ յետոյ:

Ե—795/4—Վար. Յուլ. 779/8, նոտր. թուղթ, կաշեկազմ սկզբ. կարմրագեղ, մեծ. 19×13 Տմ.: Բովանդակ. էջ 70<sup>m</sup>—163<sup>m</sup>, Հայելի վարուց, առանց վերնագրի և սովորական ցանկով.— էջ 163<sup>m</sup>—167<sup>p</sup>: Յաղագս որդեգրութեան աստուծոյ. թէ ո՞ր վերայ հաստատեալ է կամ զիսորդ որդիք աստուծոյ լինիմք: Զ-ի սկիզբը էջ 3<sup>m</sup>—17<sup>p</sup> ազեղ նորագոյն գրչութեամբ Գրիգոր Տաթևացու Մեծի Աւրրաթու ճառը. ճառի վերջում անթուական յիշատակարան, որի մէջ յիշուած է «ստացողի գրոցս՝ զտէր Եսայի անարժան արեղայի և լին»: Զ-ի մեզ հետաքրքրող մասը 17—18 դարի գրչութիւն է ամենայն հաւանականութեամբ:

Ա Խմբի այս 5 Զ-երը բոլորն էլ անթիւրի օրինակներ են, ունենալով Հայելի վարուցի ամբողջութիւնը, ընդամենը ՀԱ գլուխ, իւրաքանչիւր գլուխը 1—12 պատմութիւն և Համագումար՝ 246 պատմութիւն: Տեղ տեղ գրիչները մոտանում են վերնագիրը կամ զխտակարգութիւնները, կամ ցանկը կիսատ են թողնում և այլ պայսիսի մանր տարբերութիւններ:

Ե Խմբի Զ-երն են.

Ձ—№ 792 Գեորգեան Յուլյակի, ժողովածու, բոլորգիր, թուղթ, կաշեկազմ սկզբ. կարմրագեղ, մեծ. 18×12 Տմ.: Բովանդ. էջ 1<sup>p</sup>, Փե գլուխ Հարանց վարուց պատմութիւններ. էջ 159<sup>m</sup>—169<sup>p</sup> տոմարական աղեսականներ.— էջ 170<sup>m</sup>—247<sup>m</sup> Հայելի վարուց, առանց վերնագրի, թէ ցանկում և թէ բնագրում ընդամենը ԽԹ գլուխ (փոխանակ ՀԱ-ի).

էջ 247<sup>m</sup> կնքի՝ «Բրիստոսի ծառայ Միքայէլ վարդապետ Աստապատցի թմ. ՌճԻԲ»: էջ 247<sup>p</sup>—350<sup>m</sup> ժողովածուներին սովորական զանազան հատուածներ: Զ-ն ունի պակաս 248—249 թերթերի միջև, տեղ տեղ թերթերն յետ ու առաջ են կազմուած (էջ 342<sup>p</sup>, 306<sup>m</sup> և լին): Զ-ի բուն յիշատակարանը գանդուած է էջ 306<sup>p</sup> և շարունակութիւնը էջ 350<sup>m</sup>, որից և դնում ենք քաղուածարար... Արդ աւարանցու և կաղմեցու յարանց վարքս հայոց և Ֆրանկաց և այլ բազում մանր բանք: որք աստ ժողովեալ կան: Ի թուարբրութեան հայկազեանս տոմարի. Ռ. Ճ. և

ԻԸ. (—1679), Արդ յիշեցէք ի Բրիստոս Աստուած զստացող սորին Աստապատցի անուամբ և եթ Միխայիլ վարդապետս... Դարձեալ յիշեցէք ի Բրիստոս զհոգևոր ծնողն իմ և զեղբայրսն իմ զսուրբ Ստեփաննոսի միարանքն. Մեծ Յակոբ բարունակեան, զՋաքարիա, զԼ. հարան, զՆերսէս, զՄէլիքսէթ և զՅովսէփ վարդապետն, զտէր Յովանէսն, զտէր Պօղոսն, զտէր Մկրտչն, զտէր [Փիլիպ]պոսն, զտէր Մինասն, զտէր Երեմիայն, զտէր Անդրէասն... զսուրբ Նախավկային միարանքն. զմեծ Միքայէլ վարդապետն, որ է երկրորդ ծնող իմ և առաջնորդ սուրբ ուխտիս: Նաև Յոհան և Պետրոս: Վարտիրոս և Արիստակէս, Մովսէս և Աւետիք վարդապետն, տէր Եսային, տէր Թորոսն հայր փանիցս, զԴանիէլ վարդապետ և տէր Սամուէլ հանգուցեալք: զտէր Ստեփաննոս, զտէր Վազարն, զտէր Գրիգորն, զտէր Անդրէասն, զտէր Յովանէսն, Բ. տէր Աստուածատուրքն, զտէր Յակոբն և այլ միարանք սուրբ Մաղարթայ վանիցս: Այս Զ-ի մեզ չհետաքրքրող մասում ուշագրութեան արժանի են՝ զիրք տոմարական արհեստի, որ կոչի Ըսոզ—Նամե (էջ 345<sup>m</sup>), Էարաղրութիւն հայրապետացն Հայոց (էջ 337<sup>m</sup>), Առակների ժողովածու, ընդամենը Խ համար, էջ 260<sup>p</sup>—289<sup>m</sup>, և լին և լին:

Բ—435/2 Գեորգեան Յուլյակի, նոտր. թուղթ, կաշեկազմ սկզբ. կարմրագեղ, մեծ. 21×14, Բովանդ. էջ 125<sup>m</sup>—167<sup>p</sup> Հայելի վարուց, առանց վերնագրի, թերաս, ընդամենը 89 պատմութիւն. էջ 167<sup>p</sup> գրչի անուանակոչութիւնը, Հայելի վարուց ֆրանկաց յորում կայն պատմութիւնը և բանք օգտակարք առ ի փրկութիւն մարդկանս.— էջ 168 ցանկ զլսոց թերի, ընդամենը ԻԶ գլուխ.— էջ 169<sup>m</sup>—176<sup>m</sup> զանազան պատմութիւնք, որոնք կազմում են առակագրքերի մասն, էջ 171<sup>m</sup> պատմութիւն առնուած Հայելուց, էջ 178<sup>m</sup>—192<sup>p</sup> Ցանկ Հարանց վարուց և այլ մանր գրութիւնք, Յիշատակարան էջ 191<sup>p</sup>, «Գրեցաւ ի թուին ՌճԻԸ, (—1699) յամենան մարտի ՓԱ. Չեամի մեղսամած Խաչատուր քահանայի... Յիշատակ է սուրբ մատեանս իմ Դաւիթ վարդապետիս, որ եմ սպասաւոր և առաջնորդ սուրբ Ամենափրկչի վանիս թիւն ՌճԷԳ... ետու վազմ և յիշատակ սուրբ Ամենափրկչի ամօռիս և լին...»

Զ-ի առաջին մասը էջ 1—124<sup>p</sup>, մասամբ բոլորգիր և մասամբ նոտր, Մովսէս Զուգայեցու գրութիւնք ի թիւն ՌճԻԳ. (էջ 5<sup>m</sup>), քաղուածներ Դիոն. Արիսպագացուց և լին:

Զ-երի այս համառօտ տեսութիւնից հետեւում է ուրեմն որ A խումբը ներկայացնում է մեզ Հայելու թարգմանութիւնը անթերի. մինչդեռ B խումբը ոչ միայն թերի է, այլ և կազմալուծուած: B խմբում որոշ գրութիւններ կամ պատմութիւններ այս կամ այն զլիւսից դուրս են ձգուում, պարզ երևում է որ գրիչը ջոկում է և ընտրում: Մասնաւորապէս է Չ-ում տեսնում ենք Հայելուց առնուած պատմութիւններ մտած ուրիշ հոգեշահ կամ առականման հաւաքածոյի մէջ (էջ 171<sup>ա</sup>)

A խմբի Զ-ից է կատարուել Հայելու միակ տպագրութիւնը 1702 թուին: Այս շատ հազուագիւտ հրատարակութիւնը փոքրագիր մի գիրք է, մեծ. 15×10, այսպիսի վերատառութեամբ. «ԳԻՐԸ | ՀԱՅԵԼԻ ՎԱՐՈՒՅ | ՈՐ ԱՍԻ ՀԱՐԱՆՅ ՎԱՐԸ | տպագրիցեալ ի Հայրապետութեան Տեսան Նահապետի Հայոց | կաթուղիով: | ի թվին քրիստոսի 1702. | իսկ ըստ հայոց ԻՃԾԱ | մայիսի ամսոյ Ի Աին | ի փարս մեծագոյնս Աստուծոյ», Տպագրութեան տեղն և հրատարակիչը անյայտ (տես և մատենագիտ. Զարբ.), Ունի երկու պատկեր սկիզբը և «Ծանկ ըստ այբուբենից» ծիշտ ինչպէս Զ-երում: Ծանկի զլիւսն՝ Հայելի Վարուց յորում կան պատմութիւնք հեշտալուրք և բանք օգտակարք առ ի փրկութիւն մարդկանս (տես նոյնը Զ-երում), Ծանկում գրութիւնների թիւն է Հ փոխանակ ՀԱ-ի. այս տարբերութիւնը ծագում է նրանից, որ «Վասն Սիրոյն Աստուծոյ» և «Վասն Սիրոյ Ընկերին» զլուսները միաձուլուած են, սակայն տպագրում բնագիրն ամբողջ է և ունի լրիւ ՀԱ զլուսն էջ 331<sup>ա</sup> Հայելին վերջանում է որին հետեւում են անմիջապէս երեք պատմութիւններ հրատարակիչի աւելացրած. 1. «Ընթեռնումք ըն վարս հարանց սրբոց. թէ Անապատական ոմն ձգնութեամբ մեծաւ ազաչիք զԱտուած ժամանակս բազումս սակս հիւանդութեան ուրուք զոր ունէր յինքեան ...»: 2. «Ընթեռնում ի պատմութիւնս հռոմայեցեաց, թէ Փառազնեայ դուստր Անաստասի կայսեր գոլով սիրահարեցեալ ...»: 3. «Պատմեաց մեզ սուրբն Աթանաս աղէկօսանքու հայրապետն, թէ ի Բիւրիտոն քաղաքի

մերձ յԵրուսաղէմ ի սահմանս Տիւրոսի և Սիզոնի ... (Այս վերջինը հին թարգմանութիւն), Տպագիրն ունի ընդամենը 335 էջ, չունենալով որ և է յիշատակարան կամ թարգմանչի յիշատակութիւն:

Ամիտիւնով թուականների վերաբերեալ տեղեկութիւնները կ'տանանք.

Ա—գրուած է	1660	փրկչ. թուին
Բ—	1671	»
Ա Գ—	1673	»
Դ	»	մօտադրապէս (1736), բերես այս բուից առայ:
Ծ—	»	անթուական.
Զ—	»	1679 փրկչ. թ.
Ը—	»	1699 »
Տ(տպագրիչ)—	1702	»

Ուրեմն նսագոյն թուականն է 1660 (Ա), որից յետոյ չէ կարող լինել Հայելու թարգմանութեան ժամանակը: Թարգմանչի եւ թարգմանութեան մասին տեղեկութիւն է տալիս մեզ միմայն Գ Զ-ը. «որ թարգմանեալ եղև ի լատին բարբառոյ հայ բարբառ ձեռամբ Ստեփաննոս վարդապետի Իլովացոյ, որ է վերակացու և գանձապետ ի սուրբ կաթուղիկոսարանն էջմիածնի»:

Լրացուցիչ և աւելի մանրամասն տեղեկութիւններ հաղորդում են մեզ անկախ այս մեր ուսումնասիրած Զ-երից, և ուրիշ ազգիւրների որոնց մասին գալ անգամ:

Գալուստ Տէր Մկրտչեան.

14 յունիսի 1899.



ՏՐԵԽՕՄԵՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ.

Աչքի առաջ ունենալով արախօսաց կոչուած աչքի հիւանդութեան վարակիչ շատկութիւնը և տեսողութեան դործարանի համար ունեցած վրնատակար հեռեանքները, բժիշկները և մանկավարժները առանձին ուշադրութեամբ են վերաբերում դէպ այդ հիւանդութիւնը: Պատարե-